ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 17.09.2019թ. ժամը 12[00]

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/16>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ալեքսան Եղիշյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Արամ Վիրաբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ

Վարդան Քալանթարյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Կարեն Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Համլիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատում.

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ 16.09.2019թ. ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<ՍիՓիէս Օիլ>>ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<ՍիՓիէս Օիլ>> ՍՊԸ-ն 12.09.2019թ. ներկայացրել է հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչը համապատասխանում է <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/16>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 <<ՍիՓիէս Օիլ>>ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2.2 Կիրառել անգործության ժամկետ."Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել gnumner.am կայքում:

2.4 անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահող՝ ---------- *Ա.Եղիշյան*

անդամներ՝

---------- *Ա.Վիրաբյան*

---------- *Վ.Քալանթարյան*

---------- *Կ.Հովհաննիսյան*

քարտուղար՝ ---------- *Հ.Հակոբյան*